

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«Ավանդադրված գիտական աշխատանքները գիտատեխնիկական գրադարանում»

Հարգելի պարոն.....

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի (ՆՁԱԿ) գիտատեխնիկական գրադարանը 2020թ. սեպտեմբերի 25-ին, ժամը 14:30-ին կազմակերպում է գիտնական, գրող, հրապարակախոս, մի շարք գրքերի հեղինակ Ստեփան Պապիկյանի կողմից ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում ավանդադրման ներկայացրած՝ «Գյումրի քաղաքի էներգետիկայի պատմությունը» մենագրության, «Երևանի ՋԷԿ-ի արդի վիճակը և զարգացման հեռանկարները», ինչպես նաև «Հրազդանի ՋԷԿ-ի արդի վիճակը և զարգացման հեռանկարները» գիտական աշխատանքների շնորհանդեսը:

Հեղինակը կխոսի Գյումրի քաղաքի էներգետիկայի պատմության, էլեկտրակայանների, ինչպես նաև ջերմամատակարարման համակարգերի վերաբերյալ կարևոր պատմական տեղեկությունների, Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երի վերաբերյալ պատմական տվյալների, արդի վիճակի և զարգացման հեռանկարների մասին: Ս. Պապիկյանը կներկայացնի նաև կատարված այն վերլուծություններն ու առաջարկությունները, որոնք հնարավորություն կտան տնտեսել վառելիքաէներգետիկ ռեսուրսները՝ նպաստելով բնապահպանական խնդիրների լուծմանը:

Միջոցառման ընթացքում կկարևորվի նաև գիտատեխնիկական գրադարանի կողմից իրականացվող «Գիտական աշխատանքների ավանդադրում» ծառայությունը, որը մասնավորապես հնարավորություն է ընձեռել հեղինակին, պաշտպանել օրենսդրությունից բխող իր հեղինակային իրավունքը, հրապարակային դարձնել գիտական ձեռագիր աշխատանքները, ի պահ դնել գրադարանի ֆոնդերում և հասանելիություն ապահովել հանրության լայն շրջանակներին:

Մասնակիցները նաև կծանոթանան գրադարանի ավանդադարված գիտական աշխատանքների ֆոնդի ցուցահանդեսին և առաջարկվող ծառայության մանրամասներին:

Միջոցառումը նախատեսված է գիտնականների, ուսանողների, պատմաբանների, էներգետիկայի ոլորտի մասնագետների և այլ հետաքրքրված անձանց համար:

Միջոցառումը տեղի կունենա «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում (ք. Երևան, Կոմիտասի 49/3, խորհրդակցությունների դահլիճ, 2-րդ հարկ, կայքէջ՝ <http://www.innovcentre.am/hy/>, ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/InnovCentre> թվիթերյան էջ՝ <https://twitter.com/InnovCentre>, լինկդինյան էջ՝ [linkedin.com/in/«նձակ»-պոսկ-1141881ab](https://www.linkedin.com/in/«նձակ»-պոսկ-1141881ab)):

Խնդրում ենք մասնակցությունը հաստատել adasarg@innovcentre.am էլ. փոստի հասցեով կամ զանգահարել 011-238747 հեռախոսահամարով, ինչպես նաև գրանցվել մեր ֆեյսբուքյան էջում՝ <https://www.facebook.com/events/3603796253016733/>